

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 5-րդ ԴԱՍԱՐԱՆ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈԻԼ, 2022 թ

Տևողությունը – 150 րոպե

1. Ինչպե՞ս կփոխվի քանորդը, եթե բաժանելին մեծացնենք 2 անգամ, իսկ բաժանարարը փոքրացնենք 2 անգամ:

- 1) կմեծանա 2 անգամ 2) կփոքրանա 2 անգամ
3) կմեծանա 4 անգամ 4) չի փոխվի

2. Ինչ-որ տարվա փետրվար ամսում շաբաթվա հինգշաբթի օրերը ավելի շատ էին, քան կիրակի օրերը: Շաբաթվա ի՞նչ օր էր այդ տարվա առաջին օրը:

- 1) երկուշաբթի 2) երեքշաբթի 3) չորեքշաբթի 4) շաբաթ

3. Բազմազավակ ընտանիքի երեխաներից մեկը ունի 3 եղբայր, իսկ մյուսը այնքան քույր ունի, որքան՝ եղբայր: Ամենաշատը քանի՞ երեխա կա այդ ընտանիքում:

- 1) 10 2) 9 3) 8 4) 7

4. 2022 տարեթիվը գրվում է երկու տարբեր թվանշաններով՝ 0 և 2: Ամենաքիչը քանի՞ տարի հետո տարեթիվը նորից կգրվի երկու տարբեր թվանշաններով:

- 1) 180 2) 178 3) 90 4) այլ պատասխան

5. Դավիթը գրել է ամենափոքր թիվը, որի թվանշանների գումարը հավասար է 39-ի: Ինչքա՞ն է Դավիթի գրած թվի հաջորդ թվի թվանշանների գումարը:

- 1) 40 2) 31 3) 4 4) այլ պատասխան

6. Սենյակում կա 16 մարդ՝ ճշտախոսներ և ստախոսներ (ճշտախոսը միշտ ճիշտ է խոսում, իսկ ստախոսը միշտ խաբում է): Նրանցից 9 ասացին. «Սենյակում ճշտախոսների քանակը կենտ թիվ է», մեկն ասաց. «Սենյակում ճշտախոսները ավելի շատ են, քան ստախոսները», իսկ մյուսները ասացին. «Սենյակում ճշտախոսների քանակը գույգ թիվ է»: Քանի՞ ճշտախոս կա սենյակում:

- 1) 6 2) 7 3) 9 4) 10

7. Բակում ճագարները հավերից 70-ով ավել էին: Ճագարները միասին հավերից 500 ոտք ավելի ունեն: Ընդհանուրը քանի՞ ճագար և հավ կա բակում:

- 1) 290 2) 270 3) 300 4) այլ պատասխան

8. Եթե երկնիշ թվի տասնավորը փոխարինեն 1-ով, ապա թիվը 6 անգամ կփոքրանա: Քանի՞ այդպիսի երկնիշ թիվ կա:

- 1) 1 2) 2 3) 3 4) 4

9. Գտնել այն եռանիշ թվերի քանակը, որոնք թե՛ 2-ով բազմապատկելիս, թե՛ 2-ի բաժանելիս ստացվում են եռանիշ թվեր:

1) 299

2) 140

3) 150

4) 300

10. Գնորդը հաշվեց. եթե ապրանքի համար վճարի 2000 դրամանոցներով, ապա 18 թղթադրամ ավել կտա, քան եթե 5000-դրամանոցներով վճարի: Քանի՞ թղթադրամ վճարեց գնորդը ապրանքի համար, եթե ապրանքի գնի կեսը նա վճարեց 2000 դրամանոցներով, իսկ մյուս կեսը՝ 5000 դրամանոցներով:

1) 21

2) 24

3) 27

4) 28

11. Մի եռանիշ թվի թվանշանների գումարը 8 անգամ մեծ է մյուս եռանիշ թվի թվանշանների գումարից: Ամենաշատը ինչքա՞ն կարող է լինել այդ թվերի տարբերությունը:

12. Քանի՞ եղանակով կարելի է 100 դրամանոցը մանրել 10, 20 և 50 դրամանոցներով:

13. Եթե եռանիշ թվին ձախից կցագրենք 5 թվանշանը, ապա կստանանք 3 անգամ ավելի մեծ թիվ, քան աջից 4 կցագրելիս: Գտնել սկզբնական եռանիշ թիվը:

14. Էլեկտրոնային ժամացույցը ցույց է տալիս ժամը և րոպեն (օրինակ 16 : 45): Օրվա մեջ քանի՞ րոպե է կազմում այն ամենաերկար ժամանակահատվածը, որի ընթացքում ժամացույցի լուսատախտակին կլինի գոնե մեկ 9 թվանշան:

15. Արամը և Բաբկենը շախմատ են խաղում այսպիսի պայմանով. Եթե Բաբկենը պարտվի, ապա նա Արամին պետք է այնքան ընկույզ տա, որքան կա Արամի մոտ, իսկ եթե Արամը պարտվի, ապա նա Բաբկենին պետք է տա 32 ընկույզ: Առաջինը պարտվեց Բաբկենը, երկրորդը՝ Արամը, երրորդը՝ Բաբկենը և չորրորդը՝ Արամը: Դրանից հետո Արամը 60 ընկույզ ունեցավ: Սկզբում քանի՞ ընկույզ ուներ Արամը: